

1. Բ Ա Տ Ո Ւ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԸ, ՆՎԻՐՎԱԾ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ
ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ
ՏԱՐԵԳԱՐՁԻՆ

Հունիսի 20—22-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հա-
սարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովը՝ նվիրված Ի. Վ. Ստալինի
«Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձարեղ աշխատության հրապարակման առաջին
տարեդարձին։

Ժողովը բաց արեց Հայկական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ
Մ. Ներսիսյանը, որից հետո «Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքը և սովետական լեզ-
վաբանության խնդիրները» թեմայով զեկուցեց Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ղա-
փանցյանը։ Այդ օրվա երկրորդ զեկուցումը կարդաց ֆիլ. գիտ. թեկնածու ի. Մամբյանը
«Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների նշանակությունը մարքս-լենինյան փիլի-
սոփայության զարգացման համար» թեմայով։ Հունիսի 21-ի նիստում զեկուցեցին պատմ. գիտ.
թեկնածու Ս. Որեմյանը «Հայերի էթնոգենեզիսի պրոբլեմը» Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշ-
խատությունների լույսի տակ» թեմայով, ֆիլ. գիտ. դոկտոր Սեվակը «Լեզվի և մտածողության
հարցի մասին, Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ» թեմայով և ֆիլ. գիտ.
թեկնածու Է. Թոփչյանը «Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքը և գրականագիտության
հարցերը» թեմայով։

Հունիսի 22-ի նիստում զեկուցեց տեա. գիտ. թեկնածու Ս. Զուրաբյանը հետևյալ թեմայով՝
«Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը և բազմաթիվ տե-
սության խնդիրները»։ Նույն օրը պատմ. գիտ. թեկնածու Բ. Առաքելյանը զեկուցեց «Հնագի-
տության հարցերը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ» թեմայով, ֆիլ. գիտ.
թեկնածու Ա. Ղանալանյանը՝ «Ի. Վ. Ստալինի լեզվաբանության վերաբերյալ աշխատություննե-
րը և ֆուլկլորի խնդիրները» թեմայով։

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՈՎԵՏԱԶԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հունիսի 13—14-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արև-
դյանի անվան Գրականության ինստիտուտի Գիտական խորհրդի ընդլայնած նիստը, նվիր-
ված սովետական գրականագիտության խնդիրներին։

«Գրականագիտության հարցերը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի
տակ» թեմայով զեկուցեց Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի դիրեկտոր, ֆի-
լոլոգիական գիտությունների դոկտոր Մ. Ուրյանը։

Զեկուցողը նշեց Բ. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների անգնահատելի նշա-
նակությունը գրականության տեսության և պատմության հիմնական հարցերի, հատկապես
գրականության սպեցիֆիկումի խորը ըմբռնման գործում։

Բազիսի և վերնաշենքի ստալինյան կլասիկ բնութագրումները, — ասում է զեկուցողը, —
մեզ հիանալի պատկերացում են տալիս գրականության որպես վերնաշենքային երևույթի ա-
րանձնահատկությունների մասին։

Զեկուցողը նշում է, որ հասարակական վերնաշենքային երևույթների մեջ, հասարակական գիտակցության ձևերի մեջ, գրականությունն ունի իր առանձնահատկությունները: Գրականությունը իրականությունը արտացոլում է ոչ թե լոգիկական կատեգորիաներով, այլ գեղարվեստական կերպարների և կենդանի պատկերների միջոցով:

Անցնելով գրականագիտության կոնկրետ խնդիրներին, զեկուցողը ասում է, որ բազիսի և վերնաշենքի հարաբերության ստալինյան բնութագրումները մեղ սովորեցնում են, որ ամեն մի ժողովրդի գրականության նկատմամբ պետք է կոնկրետ պատմական մոտեցում ունենալ և նրա զարգացման պրոցեսը միշտ հասկանալու համար այն ուսումնասիրել տվյալ ժողովրդի պատմական զարգացման հետ սերտորեն կապակցված:

Ստալինյան այն դրույթը, որ վերնաշենքը ծնունդ առնելով բազիսից, ոչ միայն արտացոլում է բազիսը, այլև անտարբեր չի վերաբերում բազիսի ճակատագրին — դասակարգերի ճակատագրին, փոխադարձաբար ներգործում է իրեն ծնողի՝ բազիսի վրա, սպասարկում է բազիսին, որպեսզի այն ձևավորվի և ամրապնդվի — գրականագետներին տալիս է ճշմարիտ չափանիշ՝ գնահատելու համար թե անցյալի և թե ներկայի գրական երևույթները, հեղինակների ստեղծագործությունները, որոշելու նրանց թերությունները: Գրականության՝ հասարակական կյանքում մեծագույն ակտիվ ուժ լինելու փաստը ասում է մեզ, որ մատերիալիստական բնագիտությունը չի կարող և չպետք է լինի ճորհագրության և փաստերի հանդեպ: Քննադատությունը, միայն պետք է բացատրի անցյալի դրական երևույթների հարաբերությունը, այլև պոստիվական զիրուրից գնահատի այն: Բուլձեիկյան քննադատությունը չի կարող անտարբեր և հանդուրժական վերաբերմունք ցույց տալ սովետական գրողների ստեղծագործություններում երևացող գաղափարական-գեղարվեստական թերությունների նկատմամբ, որովհետև սովետական դրականությունը կոչված է առաջավոր մեծ դեր խաղալու մեր հասարակական կյանքում, սոցիալիստական բազիսին սպասարկելու գործում: Սոցիալիստական ուսուցիչի գրականությունը լինելով աշխարհի վերափոխման կարևոր գործոններից՝ ժողովրդային է և ծառայում է միլիոնավոր աշխատավորության շահերին, կոմունիզմի կառուցման շահերին: Այդ է գրականության պարտականության լենինյան-ստալինյան մեծ սկզբունքը, որն ընկած է գրականագիտության հիմքում: Հարվածելով բուրժուական էսթետիզմը, լենինը միաժամանակ հարվածել է գրականության պարտականության սկզբունքը գոհակացնողներին: Անհրաժեշտ է հիշել, — ասում է զեկուցողը, — որ մինչև վերջերս էլ պատահում են մարդիկ (Բելիկը և ուրիշներ), որոնք մահական վուլգարիզատորների նման խեղաթյուրելով գրականության պարտականության հարցը, գրողի ստեղծագործական աշխատանքը նույնացնում են պարտական աշխատանքի մյուս բնագավառների հետ:

Ելնելով այն փաստից, որ գեղարվեստական խոշոր երկերը իրենց նշանակությունը պահպանում են իրենց ծնող բազիսի լիկվիդացումից հետո էլ, չեն ոչնչանում տվյալ բազիսի վրա ծնունդ առած վերնաշենքային այլ երևույթների ոչնչացման հետ միասին, մի բանի գրականագետներ և փիլիսոփաներ հանդես եկան միանգամայն սխալ այն տեսակետով, որ իբր թե դրականությունը և արվեստները չի կարելի դասել վերնաշենքային երևույթների շարքը, չնայած մարքսիզմի կալիկների ուղղակի ցուցումներին: Այսպես մտածողները, որոնք նախասոցիալիստական շրջանի ամբողջ առաջավոր արվեստը և գրականությունը հանում են վերնաշենքի շրջանակներից և վերնաշենք են համարում միայն տիրապետող դասակարգի արվեստն ու դրականությունը, փաստորեն կանգնում են այսպես կոչված «միասնական հոսանքի» իդեալիստական տեսության վրա:

Ընկ. Մկրյանը ընդարձակ մեջբերումներ է անում մարքսիզմի կլասիկների աշխատություններից այն մասին, որ սեփականատիրական հասարակարգում հասարակական հարաբերությունների հետ փոխվում են մարդկանց մտապատկերները, հայացքները, հասկացողությունները և այդ փոփոխությունը կատարվում է նույն բազիսի ծնունդ հանդիսացող վերնաշենքի մեջ, բանի որ կենսական հին հարաբերություններին բայց առ թայլ հետևում են գաղափարները, իսկ հին հարաբերության մեջ նոր տարրերի գոյացման հետ՝ նոր գաղափարներ են առաջանում և ամրապնդվում, որոնք հենց ուղղվում են հին հարաբերությունների դեմ:

Այսպես, ընդունելով, որ դրականությունն իր բոլոր արտահայտություններով վերնաշենք է բազիսի վրա, — ասում է ընկ. Մկրյանը, — քննադատաբար գրականագիտական կարևորագույն հարցերից մեկը դառնում է այն, թե ինչու բազիսների և վերնաշենքերի փոփոխումներից հետո էլ անցյալում գրված բազմաթիվ գործեր պահպանում են էսթետիկական հաճույք և բավականություն պատճառելու ուժը, ոչ միայն պահպանում, այլև որոշ կողմերով ավելի բարձր են գնահատվում և ավելի խորն են ընկալվում, քան իրենց ծնող բազիսի գոյության շրջանում:

Ի՞նչն է պայմանավորում երկի գեղարվեստական մեծությունը, ի՞նչն է անցյալի գրական-կուլտուրական ժառանգությունից անցնում մեզ, որը մենք օգտագործում ենք և պետք է օգտագործենք:

Գեղարվեստական երկի մնայնության հարցը,— ասում է պրոֆ. Մկրյանը, բարդ երևույթ է և չի կարող սպառվել երկի մի որևէ էական կողմով, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ մի շարք էական նշանակություն ունեցող կողմերի ամբողջությունը: Մարդկային կյանքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող մի ժամանակաշրջանի բազմակողմանի, ամբողջական և խորը պատկերումը կատարյալ ձևերով, ստեղծագործությանը տալիս է համաշխարհային նշանակություն և մնայուն արժեք:

Անցյալի մեծագույն ռեալիստների գործերը՝ արտացոլելով իրենց էպոխան ամբողջությամբ՝ պատկերելով և մեռնողը, ռեակցիոներ և առաջավորը, քնականաբար խոշոր ճանաչողական արժեք են ստանում: Երկի գեղարվեստական և ճանաչողական արժեքը պայմանավորում են միմյանց:

Հռենական էպոսի, Տոլստոյի և Բալզակի ստեղծագործությունների գեղարվեստական սահմանումը տալով, մարքսիզմի կլասիկները, անկասկած, հաշվի են առնել այդ ստեղծագործությունների գեղարվեստական սպեցիֆիկայի բոլոր կողմերը, այն հանգամանքը, որ դրանք իրենց ժամանակաշրջանը ներկայացրել են բազմակողմանիորեն, նախ և առաջ կոնկրետ մարդկանց, ստեղծագործությունների հերոսներին, գործող անձերին: Պուշկինի, Տոլստոյի, Ենրսպիրի և շատ այլ խոշոր գրողների մեծությունը ու նրանց գործերի մնայուն արժեքը չի կարելի պատկերացնել, առանց նրանց պատկերացրած կերպարների գնահատման:

Սովետական գրականությունը,— ասում է զեկուցողը,— արտացոլելով մեր սոցիալիստական հարուստ ու գեղեցիկ կյանքը, կոմունիզմ կառուցող միլիոնավոր աշխատավոր մասսաների հերոսական կյանքը, պատկերելով սովետական մարդկանց՝ ամենահզոր հոգեկան աշխուրհով, ամենահարուստ բարեմասնություններով օժտված, հատուկ նյութից կերտված մարդկանց (ինչպես ասել է մեր մեծ առաջնորդը կոմունիստների մասին), քնականաբար հանդիսանում է երկրագնդի ամենաառաջավոր և գեղարվեստական որակով ամենաբարձր գրականությունը: Այդ գրականությունը, սոցիալիստական ռեալիզմի գրականությունը, արդեն նշանավորվել է անցյալի խոշորագույն կլասիկներից որոշ գծերով շատ բարձր այնպիսի վիթխարի գրական դեմքերով, ինչպիսիք են Մաքսիմ Գորկին և Վլադիմիր Մայակովսկին:

Նյունահետև՝ պրոֆ. Մկրյանը, անդրադառնալով սովետահայ գրականության հարցերին, ասում է, որ հայ գրականության պատմության վերաբերող մի շարք մոնոգրաֆիկ աշխատությունների և ժողովածուների մասին մեր գրականագետները դեռ հիմնավորապես չեն աշխատակցել, մինչդեռ երբ այդ գործերին նայում ենք այժմ, ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ, նկատում ենք և՛ գրական-պատմական և՛ գրական տեսական լավական շատ սխալներ ու թերություններ: Բազիսի և վիրնաշենքի փոխհարաբերության ստալինյան ուսմունքը մեզ սովորեցնում է նորից և նորից անդրադառնալ այսպես կոչված «միասնական հոսանքի» հարցին: Ըստ որում պետք է նկատի ունենալ, որ գրականության պրոցեսը իրեն միասնական հոսանք ներկայացնելը արտահայտվել է երկու կերպ. կամ անցյալի մեր ամբողջ կուլտուրայի դեմոկրատացում, կամ հակառակը, ամեն ինչի վերագրում շահագործող դասակարգերին:

Կանգ առնելով լույս տեսած մոնոգրաֆիկ աշխատությունների թերությունների և նրանց մեջ եղած լուրջ սխալների վրա, զեկուցողը մասնավորապես նշում է Մ. Արեղյանի «Հայ հին գրականության պատմություն» երկու հատորանոց աշխատության, պրոֆեսոր Ա. Տերտեղյանի «Հայ կլասիկներ» ժողովածուի, «Արովյան» մոնոգրաֆիայի և պրոֆեսոր Գ. Արովի «Խաչատուր Աբովյան» մոնոգրաֆիայի ու «Սիրո և արդարության մեծ երգիչ Սայաթ-Նովան» գրքուկի մեջ եղած լուրջ սխալները: Խոսելով Մ. Արեղյանի աշխատության սխալների մասին, զեկուցողը նշեց, որ Արեղյանը հին գրականության պատմության ամբողջ առաջին հատորը, որն ընդգրկում է 5—10-րդ դարերը, վերնագրել է «Եկեղեցա-քաղաքական մաքառման գրականություն», հիմնովին սխալ ներկայացնելով ոչ միայն հայ գրականության պատմությունը, այլև հայ ժողովրդի պատմությունը:

«Արեղյանի հին գրականության պատմության երկրորդ խոշոր մեթոդոլոգիական թերությունն այն է, որ ընդունելով կուլտուր-պատմական դպրոցի սյուժեների միգրացիայի տեսությունը, Արեղյանը ըստ էության հանգում է մեր ժողովրդական ստեղծագործության ազգային սպեցիֆիկայի ժխտմանը, փաստորեն ամբողջ հայ ժողովրդական առասպելները համարում է փոխառություններ և ոչ ինքնուրույն ստեղծագործություններ»,— ասում է զեկուցողը:

Անցնելով Ա. Տերտերյանի աշխատություններում եղած սխալներին, պրոֆ. Մկրյանը նշում է, որ Ա. Տերտերյանը որոշ դեպքերում կորցնում է պատմականության զգացումը, չափի զգացումը և անցյալի գրողներից շատերին վերագրում է այնպիսի արժանիքներ, որոնք գրական-պատմական տեսակետից ճիշտ չեն։ Պատմականության տեսակետից անկասկած խիստ խոցելի է և այն հանգամանքը, որ գրողի հետ կապված որևէ երևույթ դնահատելիս, ընկ. Տերտերյանը շատ է սիրում համեմատություններ կատարել, որոնք հաճախ հարցը պարզաբանելու փոխարեն, դարձնում են խրթին ու անորոշ։

Մի շարք ուսումնասիրությունների հեղինակներ տարվում են սխեմատիկ սոցիոլոգիական վերլուծություններով։ Որպես օրինակ զեկուցողը բերում է Գ. Արովի «Խաչատուր Աբովյան» մոնոգրաֆիան (ոուսերեն լեզվով)։ Այդ գրքում հեղինակը լավ չպատկերացնելով մեր ժողովրդի անցյալը, թույլ է տվել պատմական-քաղաքական լուրջ սխալ,— որ արտահայտվել է Արևելահայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո հայ ժողովրդի համար ստեղծված պայմանների նույնացմամբ՝ պարսկական տիրապետության ժամանակվա պայմանների հետ։ Աբովյանին նվիրված 200 էջանոց մոնոգրաֆիայում հայ դրականության պատմության մեջ դարագլուխ բացող «Վերք Հայաստանի» վեպի գեղարվեստական առանձնահատկության վերլուծությունը հեղինակը հատկացրել է 4 էջ՝ անելով երկրորդական կարգի մի բանի դիտողություններ։

Գրականության զարգացման ընթացքը ժողովրդի կյանքի և պատմության հետ սերտորեն կապակցված ներկայացնելու տեսակետից,— ասում է զեկուցողը,— նկատելի թերությունների կան նաև Հայ դրականության պատմության դասագրքի ներածական գլուխներից ինչպես և առանձին հեղինակներին նվիրված գլուխներից մի բանիսի մեջ։ Բացի այդ, դասագրքում որոշ դեպքում դեռ բավարար չեն լուսաբանվում գեղարվեստականության, գրական ուղղությունների և հեղինակների լեզվի հետ կապված հարցերը։

Զեկուցողը կանգ է առնում նաև «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի ընդհանրատական և դրախոսության բաժինների վրա, նշելով, որ ամսագրի էջերում քննադատությունը հետ է մնում մեր կյանքի և գրականության պահանջներից։ Այդ ամսագրում տպագրվող հոդվածների որակը շատ ցածր է։ Մեր պարտիայի 15-րդ համագումարում,— ասում է զեկուցողը,— ինչպես և «Պրավդա»-յում տպագրված՝ ընկեր Գ. Հայրյանի «Ժամանակակից հայ գրականության մի բանի խնդիրների մասին» հոդվածում, միանգամայն ճիշտ կերպով նշվեց մեր գրական քննադատության անբավարար վիճակը և չափազանց ցածր մակարդակը։

Մեր քննադատությունը դեռ անբավարար է զբաղվում նաև լեզվի մաքրության և գեղարվեստական ստեղծագործության լեզվի ու ոճի հարցերով։ Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է որ ոլեզուն հաղորդակցման գործիք լինելով, դրա հետ միասին հանդիսանում է հասարակության պայքարի ու զարգացման գործիք», որ լեզուն «անխզելիորեն կապված է մտածողության հետ», «զգային կուլտուրայի ձևն է և Այս բոլորը նշանակում է, որ լեզվի մաքրության հարցը մեզ համար չափազանց կարևոր քաղաքական-հասարակական նշանակություն ունեցող հարց է և մեր քննադատությունը չի կարող եռանդուն պայքար չտանել լեզվի մաքրության համար։ Պատմությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման գործում խոշոր նշանակություն է ունեցել և ունենում է գեղարվեստական գրականությունը։ Երա համար էլ պետք է պայքարել գրաբարի և բարբառների սխալ օգտագործման, մեր լեզվի հարուստ ֆոնդի և բերականական կանոնների անտեսման դեմ։

Վերջացնելով իր խոսքը, զեկուցողը ընդգծում է, որ ընկեր Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունները, ստեղծագործական մարքսիզմի այդ հիասքանչ երկերը, տեսական-իդեական մեծ լիցք են տալիս և մղում են մեզ՝ մտքերի ազատ փոխանակությամբ առաջ տանելու և էլ ավելի զարգացնելու սովետական գրականությունը։

Պրոֆ. Մկրյանի զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի լայն փոխանակություն։ Բոլոր երույթ ունեցողները միահամուռ կերպով ընդգծեցին ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության բացառիկ մեծ գիտական, դարագլուխ կազմող նշանակությունը, նրա վիթխարի դերը սովետական գիտության հետագա զարգացման համար, մասնավորապես գրականության պատմության և գրականագիտության հարցերի լուսաբանման համար։

Ֆիլոլոգիական դիտ. թեկնածու ընկ. Աս. Ասատրյանը իր ելույթը նվիրեց հայոց գրական լեզվի պատմության, նրա կազմավորման ու զարգացման ուղիների առանձնահատկություններին վերաբերող հարցերին։ Ընկ. Ասատրյանը կարծում է, որ «Հայ ժողովուրդը, իր պատմական հետավոր ու մոտավոր անցյալում, ապրելով յայնքան բազմատարած հատվածներով,

իրար հակադիր քաղաքական ուժերի պայմաններում, ունեցել է ոչ թե մեկ, այլ երկու դրական լեզու, որոնք, իհարկե, միևնույն համաժողովրդական հայկական լեզվի դրական ճյուղավորումներն են: Դրանցից մեկը՝ արևելահայկական պատմական քնականոն զարգացման հետևանքով դարձավ համազգային գրական ու նաև պետական լեզու, սովետական ազգային պետականության շնորհիվ, այսինքն այն բանի շնորհիվ, որ Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի սոցիալիստական ազգային վերածննդի օրրանը: Իսկ մեր դրական լեզվի մյուս ճյուղի համար, Հոկտեմբերից հետո, հայ ժողովրդի սովետական պետականության ստեղծվելուց հետո, այլ հեռանկար չէր մնում ու չի մնում, քան այն, որ նա իր կենսունակ տարրերով միանում ու միաձուլվում է մեր այսօրվա համազգային գրական, պետական լեզվին:

Ընկ. Ասատրյանը առարկում է նաև այն տեսակետին, թե հայ ազգի, ուրեմն և հայ ազգային լեզվի կազմավորման պրոցեսը տեղի է ունեցել միայն Արևելյան Հայաստանի սահմաններում:

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկեր Գր. Գրիգորյանը իր ելույթում խոսեց գրականությունը որպես վերնաշենքային երևույթ դիտելու, նրա օրինաչափությունների ուսումնասիրման և գրական ժառանգության ճիշտ գնահատման մասին:

Ֆեոդալական կամ բուրժուական բազիսների գոյության պայմաններում, — ասաց ընկ. Գր. Գրիգորյանը, — առաջավոր, դեմոկրատական, ռևոլյուցիոն գաղափարների և այդ գաղափարներն արտացոլող գեղարվեստական գրականության առկայության փաստը բացատրվում է այդ բազիսների, հետևապես նաև նրանց համապատասխան վերնաշենքերի ոչ միատարրությամբ, նրանց միջև եղած անտագոնիզմով: Ֆեոդալական և բուրժուական բազիսների պայմաններում ստեղծված ճնշված ազգի կուլտուրան չունի զարգացելու այդ բազիսների ոչնչացման հետ միասին: Ֆեոդալական ու բուրժուական բազիսների լիկվիդացման հետ միասին լիկվիդացվեց այն, ինչ օրինականացնում էր՝ իշխող դասակարգերի շահագործումը, այն, ինչ փառաբանում էր բուրժուական տնտեսակարգը: Եթե այս չափանիշով մենք մոտենալու լինենք անցյալի գրական ժառանգության գնահատմանը, մենք կտեսնենք, որ տվյալ բազիսի և վերնաշենքի լիկվիդացումով չեն մեղմում միայն այն գրողները, որոնք սերտորեն կապված լինելով ճնշված ազգի, ժողովրդի ու նրա ստեղծագործության հետ, իրենց երկերում բարձր արվեստով արտահայտել են առաջադիմական գաղափարներ, որոնք իրենց էպոխայի հակասությունները, հնի և նորի պայքարը վերարտադրել են բազմակողմանիորեն, տալով իրենց երկերին ճանաչողական մեծ արժեք, և վերջապես նրանք, որոնք իրենց ստեղծագործություններում բարձր արվեստով պատկերել են բուրժուազիայի դեմ բանվոր դասակարգի մղած ռևոլյուցիոն պայքարը:

Անցյալի գրական ժառանգությունը գնահատելիս պետք է պարզել, թե ինչ գաղափարներ է արտահայտել տվյալ գրողը, որքանով են դրանք նպաստել հասարակական առաջընթացին, հեղինակը ինչպիսի խորությամբ է պատկերել իր ապրած էպոխան, ինչպիսին է այդ ստեղծագործության ճանաչողական ու գեղարվեստական արժեքը:

Ըստ այնմ էլ անհրաժեշտ է քննադատաբար յուրացնել անցյալի խոշոր գրողների գրական վարպետությունը, արտահայտչական միջոցների օգտագործման նրանց ձևերն ու եղանակները, էպոխան ամբողջությամբ պատկերող և ճանաչողական մեծ արժեք ներկայացնող նրանց արվեստը, անհրաժեշտ է վերցնել այն լավագույնը, — ասում է Լենինը. — ինչ ստեղծել է մարդկային միտքը հաղթարամյակների ընթացքում:

Խոսելով վուլգար սոցիոլոգիզմի արտահայտությունների մասին մեր գրականագիտության մեջ, ընկ. Գր. Գրիգորյանը այդպիսի արտահայտություն է համարում ընկ. Ա. Ոսկերչյանի հոդվածը հայ գրականության պատմության դասագրքի մասին, տպված «Սովետական գրականություն» և Արվեստ» ամսագրում: Այդ հոդվածում Ոսկերչյանը Պոռչյանին և Մուրացանին համարում է նահապետական գյուղացիության գաղափարախոս, մոռանալով, որ կապիտալիզմի զարգացումը վաղուց արդեն քայքայել էր նահապետական գյուղը: Միաժամանակ նա կողք-կողքի է դնում մի շարք կողմերով իրարից տարբեր գրողների, արժեքազրկում է այդ գրողների ստեղծագործությունները: Պոռչյանին և Մուրացանին նահապետական գյուղացիության տրամադրությունների արտահայտիչ համարելով, շարաշահելով նրանց աշխարհայացքի պահպանողական մի բանի գծերը, ընկ. Ոսկերչյանը ըստ էության ցանկանում է ցույց տալ, որ նրանք իբրև նահապետական գյուղի գովերգուհի, իդեալականացնում էին այն, դեմ էին գնում պատմական զարգացմանը: Ահա թե ուր կարող է հասցնել անցյալի նշանավոր գրողների գրական ժառանգության գնահատման հարցում ցուցաբերած վուլգար սոցիոլոգիական, հակագիտական մեթոդը:

Ֆիլ. գիտ. թեկնածու Ռուզան Նաևումյանը իր ելույթը նվիրեց գրականության սպեցիֆիկ առանձնահատկությունների, տարբեր ազգերի կուլտուրաների առանձնահատկությունների և հայ ժողովրդի գրականության բնորոշ գծերի հարցերին:

Անդրադառնալով հայ գրականության բնորոշ հատկանիշներին, ընկ. Նաևումյանը ասում է, — մեր գրականության հիմնական գծերից մեկը եղել է հայրենասիրությունը: Այդ հայրենասիրությունը տարբեր արտահայտություններ է ունեցել հայ ժողովրդի պատմական կյանքի տարբեր պայմաններում:

Մեր գրականության զարգացման ընթացքը ցույց է տվել, որ Իրա լավագույն կերպարները արտացոլել են հայ ժողովրդի պատմական ծանր վիճակը արտաքին և ներքին ճնշման ու կնգեքման գեմ: Այդ բանը մենք տեսնում ենք Արուսյանի, Բաֆու, Փափազյանի և ուրիշների մոտ:

Հետագայում բուրժուական հարաբերությունների զարգացման շրջանում թուլանալով, Շիրվանզադեն և ուրիշները դրսևորել են հայ ժողովրդի պատմական կյանքի մի ուրիշ բնորոշ գիծը՝ ժողովուրդների բարեկամությունը: Հայ գրականության մեջ դրսևորված այդ հատկանիշները մեր անցյալի գրականության լավագույն տրագիցիաներն են, որոնք նոր հիմքերի վրա շարունակում են զարգանալ սովետական գրականության մեջ:

Դրականության սպեցիֆիկ առանձնահատկությունների հարցին է նվիրում իր ելույթը սուս ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. էդ. Թովչյանը: Ընկեր Ստալինը նշում է այն հանգամանքը, — ասում է ընկ. էդ. Թովչյանը, — որ հասարակական երևույթների ուսումնասիրման գործում կարևոր են դրանց սպեցիֆիկ առանձնահատկությունները: Ահա այդ տեսակետից, հրք մենք մոտենում ենք գրականության հարցին, ապա պետք է ասել, որ գեղարվեստական գրականության բուն էությունը անհնարին է հասկանալ, առանց հաշվի առնելու նրա սպեցիֆիկ առանձնահատկությունները: Հայտնի է, որ գեղարվեստական գրականությունը մտածողություն է պատկերների միջոցով: Դեղարվեստական գրականությունը իրականության արտացոլումն է գեղարվեստական պատկերի միջոցով: Հետևաբար՝ այստեղ մեծ նշանակություն ունի պատկերի հարցը, որ իր հերթին սերտորեն կապված է ձևի և բովանդակության հարցի հետ:

Հայտնի է, որ գեղարվեստական գրականությունը արտացոլում է իրական կյանքը և մարդկանց փոխհարաբերությունները պատկերների, կերպարների միջոցով: Հետևաբար, ձևը հանդես է գալիս, որպես իրականության խտացրած վերարտադրություն: Այս հանգամանքը հանդիսանում է գեղարվեստական գրականության սպեցիֆիկումը, առանց որի մենք չենք կարող հասկանալ գրականության էությունը: Որքան ավելի խորն է վերարտադրված պատմական տվյալ ժամանակաշրջանի առաջավոր բովանդակությունը, այնքան տվյալ սետղծագործությունը շատ ավելի երկարատև է ապրում, շատ ավելի ազդեցություն գործելու ունակություն ունի, քան այն ստեղծագործությունը, որը մարդկային կյանքը ճիշտ չի արտացոլում, կամ որը խեղաթյուրված է արտացոլում:

Ընկեր Ստալինը, խոսելով ձևի և բովանդակության մասին, ասել է. «Բանն այն է, որ կոնֆլիկտը գոյություն ունի ոչ թե բովանդակության ու ձևի միջև ընդհանրապես, այլ ճիշտ ձևի և առանձն բովանդակության միջև, որը նոր ձև է որոնում և նրան է ձգտում» (Ի. Ստալին, Երկեր, հատ. I, էջ 357): Ընկեր Ստալինի այս հանճարեղ դրույթը հնարավորություն է տալիս հասկանալու գրականության սպեցիֆիկումը, այսինքն այն, որ ձևն ավելի դանդաղ է զարգանում, քան բովանդակությունը:

Երբ մենք նայում ենք գեղարվեստական ձևին, վերցրած իր ամբողջության մեջ, սկսած լեզվից մինչև գեղարվեստական պատկերները, տեսնում ենք ստալինյան հանճարեղ մտքի հաստատումը գրականության պատմության փաստերով: Հայտնի է, որ լեզուն հանդիսանում է գրականության, հետևաբար և պատկերի կառուցման հիմնական միջոցը: Առանց լեզվի չի կարող գոյություն ունենալ գրականություն և գոյություն ունենալ պատկեր: Իհարկե՝ հրք լեզուն հանդիս է գալիս որպես պատկերի ստեղծման միջոց, հրք լեզուն դառնում է ոճ, նա արդեն իր մեջ պարունակում է դասակարգային երանգ: Սակայն ոճը, պատկերավորման էլեմենտները, որպես կառուցվածքային ձևեր և ոչ իդեոլոգիական ձևեր, շատ ավելի երկար ժամանակ են ապրում, և ավելի դանդաղ են փոփոխության ենթարկվում, քան գեղարվեստական ստեղծագործության բովանդակությունը:

Խոսելով գրական ուղղությունների մասին, ընկ. էդ. Թովչյանը ընդգծում է, որ դրական բոլոր ուղղությունների մեջ պատմական տվյալ ժամանակաշրջանները ավելի խորը, ավելի լայն կերպով արտացոլում են ռեալիզմի մեջ, որովհետև ժողովրդի կյանքի հետ ամենից ավելի խորը կապված է ռեալիզմը: Նա հանդես է գալիս որպես մարդու և հասարակության փոխհարաբերության արտացոլումը: Ռեալիստական արվեստը բոլոր դեպքերում միշտ ծաղկում և բար-

դավաճում է ունուցիոն դեմոկրատական շարժումների ժամանակ: Այս փաստը կարելի է տեսնել ոռոտական ունուցիական գրականության օրինակով: Վերցնենք Ռադիշչևից մինչև Չախովը: Ռադիշչևի ստեղծագործությունները կապված են ոռոտական գյուղացիության ունուցիոն տրամադրությունների հետ: 60-ական թվականների ոռոտական ունուցիոն դեմոկրատները արտահայտում են ոռոտ ժողովրդի ցասումը բռնակալության դեմ: Եվ հենց դա էր, որ տանում էր դեպի ոռոտական ունուցիական հաղթանակ: Ահա այդ տեսակետից ենք մենք նայում անցյալի ունուցիական ժառանգությանը, մասնավորապես ոռոտական ունուցիական ժառանգությանը, որի լավագույն տրադիցիաները մշակում և շարունակում է սովետական գրականությունը:

Այնուհետև ընկ. էդ. Թոփչանը կանգ է առնում սոցիալիստական ունուցիական մի քանի առանձնահատկությունների վրա:

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Հրայր Մուրադյանը իր ելույթը նվիրում է այն հարցին, թե տարբեր էպոխաներում և տարբեր հասարակական ֆորմացիաների ժամանակ ծնունդ առած գրականության, արվեստի խոշորագույն ստեղծագործությունները լինելով մասնաւոր ժանրեր, ինչպես է, որ միաժամանակ դասակարգային են և կապված կոնկրետ հասարակական ֆորմացիաների հետ:

Մենք գիտենք, որ գրականությունը, — ասում է ընկ. Մուրադյանը, — լինելով վերնաշենքային կատեգորիա, իր խոշորագույն և լավագույն օրինակներով հանդիսանում է մնայուն արժեք: Այն ընկերները, որոնք հրաժարվում են գրականության դասակարգայնությունից, որոնք գրականությունը, արվեստի ստեղծագործությունները չեն համարում վերնաշենք բազիսի վրա, ինձ թվում է, նրանք այդ հարցի լուծման ոչ ճիշտ ճանապարհ են ընտրել: Անցյալի գրական խոշորագույն արժեքները ոչ միայն հաջորդ սերունդներին են անցնում, այլև հաճախ հաջորդ սերունդների կողմից ավելի քարձր են գնահատվում, քան նույնիսկ հեղինակների ապրած ժամանակաշրջանում: Օրինակ Արուսյանը, Նալբանդյանը, Թումանյանը փաստորեն իրենց ամբողջ խորությունը բացահայտվեցին և գնահատվեցին մեր էպոխայում, սովետական գրականության կողմից:

Ընկ. Մուրադյանի կարծիքով՝ հնարավոր չէ ցույց տալ անցյալի մի խոշոր գրող, կամ արվեստագետ, որի ստեղծագործության մեջ արտահայտություն գտած գաղափարները կարելի լինեն նույնացնել անցյալում իշխող այս կամ այն դասակարգի գաղափարախոսության հետ: Անցյալի խոշոր արվեստագետները մեծ մասամբ կոնֆլիկտի մեջ են մտել իշխող գաղափարախոսությունների հետ:

Արվեստագետը խոշոր է նրանով, որ կարողանում է իր երկերում լայն ընդգրկումով տալ մարդկային ունի փոխհարաբերությունները, կյանքի զարգացման օրեկտիվ ընթացքը, բացահայտել նրա պրոգրեսիվ տենդենցները՝ կողմնորոշվելով դեպի առաջավորն ու առաջատարը: Խոշոր արվեստագետը պատկերով դասակարգային նախապաշարումների շրջանակները, կյանքի նրկությունները դիտում է ժողովրդական լայն մասսաների ձգտումների տեսանկյունով: Եթե ստեղծագործությունը հեռու է ժամանակի հասարակական առաջավոր գաղափարախոսությունից, եթե նա տողորված չէ մարդկային քարձր իդեաներով, եթե նրա պաթոսը վեհն ու մարդկայինը չէ, ապա նրա մնայնության, մասսաների և սերունդների կողմից ընդունելությունը գտնելու ժաւսին խոսք չի կարող լինել:

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ս. Բազյանը կանգ առավ գեղարվեստական լեզվի ու ոճի և հայ գրականության ազգային սպեցիֆիկումի ու ժողովրդականության հարցի վրա, կապված գրականության ժառանգության խնդրի հետ: Ընկ. Բազյանը աշխատեց իմանալուել այն թեղը, որ անուագոնիստական հասարակության պայմաններում գեղարվեստական գրականության մեջ լինում է երկու ոճ, իրրև այդ հակասությունների արտահայտություն:

Գեղարվեստական լեզուն, — եզրակացնում է ընկ. Բազյանը, — իրրև իդեաներ արտահայտող պատկեր, այսինրն գրողի ոճը, պասսիվ, անտարբեր չէ դեպի գեղարվեստական երկի իդեան և որպես բովանդակավորված ձև անպայման ենթակա է հասարակական փոփոխություններին:

Անցնելով հայ գրականության առանձնահատկությունների և գրական ժառանգության հարցերին, ընկ. Բազյանը գտնում է, որ այդ սպեցիֆիկումը եղել է հայ ժողովրդի ազատագրման գաղափարը պարսկա-թուրքական և ներքին ու արտաքին սմեն մի բռնակալությունից: Այդ առանձնահատկությունը ամենացայտուն կերպով արտահայտել են հենց այն դրողները, որոնք կապված են եղել ժողովրդի հետ և ձգտել են քարձրացնել նյութական քարիքներ արտադրողները: Կյանքի Այդ իմաստով մեր գրականության ազգային սպեցիֆիկումի ամենախոշոր արտահայտիչները հանդիսացան Արուսյանը՝ 30—40-ական թվականների համար, Նալբանդյանը՝ 50—60-ական,

Պարոնյանը՝ 70—80-ական, Թումանյանը՝ 90—900-ական թվականների համար՝ Նրանցից ամեն մեկը արտահայտել է մեր ժողովրդի կյանքի մի պատմաշրջանի ազգային նկարագիրը։ Նրանք խորապես լինելով ժողովրդային, խորապես ազգային են և դրանով իսկ ինտերնացիոնալ և ավելի խորն արտահայտելով մեր ժողովրդի պայքարը, իրենց ստեղծագործություններով հարստացրել են համախարհային կուլտուրայի գանձարանը։

Մեր ազգային որակական առանձնահատկությունները, սպեցիֆիկան արտահայտվել է նաև մեր գրականության մյուս հոսանքի խոշոր գրողների մոտ, որոնք դրան հասնում էին իրենց տաղանդի ու արտացոլման ուժով։ Պատկանյանը, Բաֆֆին, Սունդուկյանը, Շիրվանզադեն, այդ սպեցիֆիկան անդրադարձել են՝ ենթարկված լինելով տիրապետող դասակարգերի սահմանափակության, անկախ իրենց աշխարհայացքների տարրերությունից։ Այդ պատճառով էլ ևս նրանք չեն հասել ժողովրդին ամեն տեսակի շահագործությունից ազատագրելու գաղափարին։ Պատկանյանի և Բաֆֆու մոտ ազատագրության գաղափարը արժարժվում էր սոսկ պարսկա-թուրքական, օտար բռնակալությունից ազատվելու շրջանակներում։ Իսկ Սունդուկյանի և Շիրվանզադեի մոտ վերջիվերջո հանգում էր բարոյախոսության, կապիտալիզմի սրբագործման լիբերալ բարոյի, եթե չհաշվենք «Պեպոն» Տիրապետող դասակարգերի այս նախապաշարմունքի առաջ բերած սահմանափակությունից բացի, գոյություն ունեն մեր կյանքի հետամնացությունից առաջացող սահմանափակություն, որը մի շարք այլ գրողների ևս (Պուշյան, Աղայան, Մուրադյան, Նար-Դոս) խանգարում էր լինել հայ ժողովրդի ազգային սպեցիֆիկումի այնպիսի արտահայտիչ, ինչպիսին էին Աբովյանը, Նալբանդյանը, Պարոնյանն ու Թումանյանը։

Պրոֆեսոր Հովսեփ Մելիքյանը իր ելույթում կանգ առավ գրական ժառանգության ճիշտ գնահատման և հայ գրականության պատմության պարբերացման մի քանի հարցերի վրա։ Մասնավորապես նա րենադատեց Արտ. Ոսկերչյանի Հայ գրականության պատմության դասագրքի մասին սովետական գրականություն և Արվեստ» ամսագրում տպագրված հոդվածի մի շարք դրույթները։ Ետնելով, որ ընկ. Ոսկերչյանը ճիշտ չի գնահատել վերածննդի շրջանը՝ ժխտելով նոր ծնվող բուրժուազիայի աշխարհայացքի պրոգրեսիվ դերը և այն վերագրելով միայն գյուղացիական դեմոկրատիային, ընկ. Հ. Մելիքյանն ասում է. Հայկական վերածնությունն ունի իր երանգը, ինքնատիպությունը, որը պետք է բացատրել դասագրքում, պրոֆ. Մկրյանի գրած բաժնում գուցե որոշ անճշտություն կա, բայց հիմնականում այդ վերածնությունը ճիշտ է գնահատված։ Հայ ժողովրդի քաղաքական կյանքի պայմանները իրենց կնիքն են դրել վերածնության ընթացքի վրա և խափանել են այն։

Ընկ. Հ. Մելիքյանը չի ընդունում նաև այն դիտողությունները, որ արել է Ա. Ոսկերչյանը հայ գրականության պարբերացման հարցի շուրջը։ Այն առաջարկությունը, — ասում է ընկ. Մելիքյանը, — որ արվում է հայ գրականությունը բաժանել երկու հատվածների՝ Արևելյանի և Արևմտյանի, ես կարծում եմ՝ ոչ միայն գրականության պատմության տեսակետից սխալ է, այլ համարում եմ քաղաքական տեսակետից սխալ, ոչ հիմնավորված։

Այնուհետև ընկ. Հ. Մելիքյանը կանգ է առնում Բաֆֆու գրական ժառանգության արժեքավորման հարցի վրա։ Քննադատելով ընկ. Ա. Կարապետյանի և ուրիշների այն տեսակետը, թե Բաֆֆին Աբովյանի գործի շարունակողն է, ընկ. Հ. Մելիքյանը ասում է. ճիշտ չէ, այն կարծիքը, թե Բաֆֆին հանդիսանում է Աբովյանի գործի շարունակողը։ Աբովյանը իր հումանիզմով, իր հանճարով շատ ավելի բարձր է կանգնած Բաֆֆուց։ Աբովյանի անմիջական ժառանգը հանդիսանում է Միքայել Նալբանդյանը։ Ասել, որ Բաֆֆին շարունակում է Աբովյանին, նշանակում է կրկնել նացիոնալիստների տեսակետը։ Բաֆֆին կրել է Աբովյանի ազդեցությունը, բայց այդ չի նշանակում, որ շարունակել է նրա գիծը։ Շատ մեծ է տարբերությունը «Վերք Հայաստանի», «Թուրքի աղչկա» մի կողմից և «Խենթի» երազի ու «Հայ երիտասարդության» մյուս կողմից։ Բաֆֆու ժառանգությունը շատ մեծ է։ Բաֆֆու երկերը՝ «Սալիին», «Ուսմանը», «Կայծերը», «Դավիթ Բեկը», «Ոսկե արաղաղը», «Խենթը» և այլն պետք է ճիշտ գնահատվեն։ Բաֆֆին մերկայացնում է ֆեոդալիզմը, ֆեոդալական Պարսկաստանի և ֆեոդալական Թուրքիայի բարբարոս բարբերը, պատկերում է հայ հոգևորականների և առևտրականների համագործակցությունը խուրձ փաշայի, քուրդ շեյխի և պարսիկ սարդարի հետ՝ ուղղված ժողովրդի դեմ, բարոգում է ազգային ազատագրության գաղափարը, բայց նրա այդ բարոգը սնվում է բուրժուական իդեոլոգիայով և կրում է իր մեջ նեղ նացիոնալիստական, օնակցիոն տարրեր։ Միթե իհնձիքը երազը մենք կարող ենք ժառանգել։ Ո՛չ, չենք կարող։

Իս գտնում եմ, — ասում է ընկ. Մելիքյանը, — որ Բաֆֆին շատ մեծ է Դասագրքում Բաֆֆու մասին դրված և շատ թույլ։ Հարկ եղած չափով չեն վերլուծված նրա ստեղծագործության դրական ու բացասական կողմերը։ Պետք է ազնիվ կերպով ցույց տալ դրականը և միաժամա-

նակ նշել արատավոր կողմերը, որոնք բուրժուական են և որոնցից մենք պետք է հրաժարվենք:

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու ընկ. Ա. Կարապետյանը իր ելույթում կանգ առավ բաղիսի և վեբնաշենքի հարցերի վրա: Այն մարդիկ, — ասում է ընկ. Կարապետյանը, — որոնք պնդում են, թե արվեստը, գրականությունը վերնաշենքային երևույթներ չեն, նրանք ուղղակի բաց դուռ են ծեծում և փաստորեն ուղիղիայի են ենթարկում մարքսիզմը: Ես կարծում եմ, որ շփոթը առաջանում է այն բանից, որ մարդիկ չեն տարբերում արտագրական հարաբերությունները սոսկ տնտեսությունից:

Խոսելով դրական ժառանգության հարցերի մասին, ընկ. Ա. Կարապետյանը կանգ է առնում Րաֆֆու գրական ժառանգության արժեքավորման վրա: Նա չի ժխտում, որ Րաֆֆու ստեղծագործությունների մեջ կա նացիոնալիզմ, որ Րաֆֆին հանդես է գալիս որպես բուրժուական մտածող: Սակայն, — ասում է ընկ. Ա. Կարապետյանը, — 70—80-ական թվականներին հայկական ազատագրական շարժումները ոչ միայն ուղղված էին ընդհանրապես օտար ճնշման դեմ, այլև ֆեոդալիզմի դեմ:

Ընկ. Ա. Կարապետյանը գտնում է, որ այդ ժամանակաշրջանի հայկական ազատագրական շարժումը հանդիսանում էր բուրժուա-դեմոկրատական, վեր բարձրացող շարժում, ինչպես նույն թվերի բուլղարական շարժումը: Րաֆֆին օժանդակել է այդ շարժմանը: Այս ամենը ցույց է տալիս, — եզրակացնում է Ա. Կարապետյանը, — որ Րաֆֆին պատմական այդ էտապում կանգնած էր ազգային դեմոկրատական շարժման դիրքավորման վրա:

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ա. Ղանալանյանը խոսեց ժողովրդական բանահյուսության սպեցիֆիկումի մասին: Ժողովրդական բանահյուսությունը, — ասում է ընկ. Ղանալանյանը, — հասարակական գիտակցության ձևերից մեկն է և իբրև այդպիսին մտնում է վերնաշենքի մեջ: Սակայն, ժողովրդական բանահյուսությունը հասարակական գիտակցության մի ձև է, որի մեջ, գրականության և արվեստի լավագույն ստեղծագործությունների նման և նրանցից էլ ավելի անմիջական ու ուղղակի ձևով արտահայտվել է հասարակության ճնշող մեծամասնության, նյութական բարիքներ արտադրող դասակարգի, ժողովրդի մտքերն ու զգացումները:

Ժողովրդական բանահյուսության լավագույն հուշարձանները անցյալ ֆորմացիաների ընդերքում ավելի կամ պակաս չափով արտացոլել են ապագա ֆորմացիաների տնտեսակարգերի նախադրյալները: Ժողովրդական բանահյուսության մեջ արտացոլված գաղափարները սոցիալ-պատմական տեսակետից հիմնականում եղել են առողջ և առաջավոր գաղափարներ: Նրանք բխել են աշխատանքի ու սիրո, խաղաղության ու կյանքի վերաբերյալ ժողովրդական մասսաների ունեցած պատկերացումների կենդանի աղբյուրից: Ծիշտ է ժողովրդական բանահյուսության ստեղծողների աշխարհայացքը ազատ չի եղել անխուսափելի պատմական սահմանափակությունից և դասակարգային նախապաշարումներից, սակայն բնորոշն ու հիմնականն այստեղ այն է, որ ժողովրդական բանահյուսության ստեղծողներին, (ենինի խոսքով ասած, հաջողվել է դուրս գալ շահագործող փոքրամասնության ստրկությունից, արտացոլել իրենց ստեղծագործության մեջ «ներքնախավերի» պատմական փորձը, արտահայտել շահագործող մեծամասնության տրամադրությունները՝ կապված ժամանակի կարևորագույն հարցերի հետ: Դրա համար էլ, ժողովրդական բանահյուսության լավագույն հուշարձանները վերապրում են իրենց հորինման ժամանակաշրջանը և ունեն անանցողիկ, մնայուն նշանակություն: Ավելին, ժողովրդական բանահյուսության շատ հուշարձաններ կրում են իրենց մեջ այնպիսի տարրեր, որոնք նրանց կենսունակ են դարձնում նաև այսօրվա համար, այնպիսի հատկություններ, որով նրանք վեր են ածվում սոցիալական և կուլտուրական ներգործոն մի ուժի նաև մեր ժամանակի աշխատավորական մասսաների համար:

Ժողովրդական բանահյուսության, իբրև հասարակական գիտակցության ուրույն մի ձևի երկրորդ կարևոր առանձնահատկությունը հանդիսանում է այն հանգամանքը, որ նա ծագումով անհատական, բայց բնույթով կոլեկտիվ ստեղծագործություն է: Ահա թե ինչու ժողովրդական բանահյուսությունը ի տարբերություն անհատ հեղինակներից, օրեկտիվ իրականությունը, հասարակական կյանքը վերարտադրում է շատ ավելի բազմակողմանի ու խոր կերպով:

Ժողովրդական բանահյուսության սպեցիֆիկ հատկություններից մեկն էլ տրագիցիայի հետ ունեցած նրա սերտ կապն է: Ժողովրդական բանահյուսությունը հարազատության և ռեալիստական ճշմարտության արտացոլում է տվյալ ազգի ողջ կենսագրությունը, նրա էթնիկ ձևավորման պրոցեսը, ապրած աշխարհագրական կարևոր իրադարձությունները, լեզուն և հոգեկան կերտվածքի առանձնահատուկ գծերը:

Այնուհետև անցնելով հայ ժողովրդական բանահյուսությանը, ընկ. Ա. Ղանալանյանը առանձնապես ընդգծում է այն խորապես ուսումնասիրելու անհրաժեշտությունը՝ Այդ ուտեղծագործությունները,— ասում է ընկ. Ա. Ղանալանյանը,— պետք է արժանանան մեր բանասերների և մասնավորապես լեզվաբանների հատուկ ուշադրությանը, քանի որ դրանք հայոց լեզվի հնագույն վիճակը արտացոլող միակ աղբյուրներն են։ Այդ հուշարձանների լեզվի բառապաշարի ու քերականական կառուցվածքի մանրադնին բնութայինը մեծապես կօգնի պարզելու այն հարցը, թե ինչ է ներկայացրել իրենից հայոց լեզուն մինչև 5-րդ դարը, մինչև գրականության լեզու դառնալը։

Լեզվի հետ միասին, հայ ժողովրդի բանահյուսությունը տրագիցիայի շնորհիվ հիանալի կերպով պահպանել և անդադար նորոգել է մեր ժողովրդի պատմական կյանքի և ազգային բնավորության բոլոր էական կողմերը և հատկապես նրա ազդասիրությունն ու հայրենասիրությունը։ Սրանք են ահա ժողովրդական բանահյուսության, իբրև հասարակական գիտակցության ձևերից մեկի հիմնական սպեցիֆիկ գծերը, որոնց շնորհիվ նա ուրույն տեղ է գրավում մյուս վերնաշենքերի մեջ և իր հիմնական ու էական մասով ունի անանցողիկ, մնայուն նշանակություն։

Ընկ. Ա. Ոսկերչյանը իր ելույթը նվիրեց հայ պահպանողական մամուլի գնահատման, հայ գրականության պատմության պարբերացման և գրական ժառանգության գնահատման հարցերին։ Այնուհետև ընկ. Ոսկերչյանը առարկելով Գր. Գրիգորյանին, Հ. Մելիքյանին և ուրիշներին, պաշտպանում է հայ գրականության և պատմության դասագրքի մասին «Սովետական գրականություն և Արվեստ» ամսագրում արտահայտած իր տեսակետները։

Վերջում ելույթ ունեցավ ՀԿ(Բ)Պ Կենտկոմի գրականության և արվեստի բաժնի վարիչ ընկ. Հ. Մամիկոնյանը։

ԾԱԳ. ՄԵԼԻՔՅԱՆ